

կամ ձուի լաւ հարած դեղնուց: Ցետոյ հանում են հանդերձաները, նստում տաշտի մէջ և լողանում: Լողացնողը ջուր է ածում, սապոնում, լիում, և օգնում հագնուելու:

Քաղաքում ստորին և աղքատ դասակարգը նոյնպէս տաննէ լողանում, իսկ փոքր ինչ հարուստները երկու շաբաթը մի անգամ կամ աւելի ուշ գնում են բաղանիս: Գանձակում, ինչպէս և ուրիշ գաւառական քաղաքներում, բաղանիսը կանանց կլուր կարելի է համարել: Այստեղ հաւաքում է կանանց ահազին բազմութիւն և միւնոյն, ընդհանուր բաժնում լողանում 4—5 ժամ շարունակ: Այս միջոցում միմեանց տեսնում են, միմեանց կողք նստում, երկար խօսակցում, նորութիւնները միմեանց հաղորդում, սրան նրան բամբառում: Բայց բաղանիսը մի ուրիշ դեր էլ է կատարում. մեծ մասամբ այստեղ են ընտրում հարմացուները. երիտասարդների մալրերը շուրջ գնում են բաղանիս, դիտում, քննում այս և այն աղջկան, որ տեսնին, թէ մարմնական մի որևէ պակասութիւն չունին: Բաղանիսում ծառայող լորացնող կանայքը առաջինն են, որոնց գիմում են երիտասարդների մալրերը տեղեկութիւններ առնելու աղջիկների կազմուածքի և բնաւորութեան մասին:

### ԿԵՐԱԿՈՒՐՅԱԿԱՆ ԵՒ ԽՄԻ 2 Բ.

Այս գաւառի հայ գիւղացիների սնունդը կազմում են գիմասորապէս բուսեղէնն ու կաթնեղէնը. մսեղէնը շատ փոքր մասն է բռնում. Բայց միքանի մեծ և կենդրոնական գիւղերից, ոչ մի գիւղում յատուկ մասվաճառ չկայ, և յատկապէս ծախելու համար կինդանիներ չեն մորթում: Երբեմն միայն, երբ մինչ եղը կամ ոչխարը վնասում և կամ մի որևէ հիւանդութիւն ստանալով՝ անպէտքանում կամ սատկելու վտանգին է ենթարկում, գիւղացին մորմոքած սրտով մորթում է և մի ծառի ճիւղից քաշ տալով ճայն տալիս գիւղին, որ դան միս առնեն: Այս ժամանակ ամբողջ գիւղը ցնծում է և մի տեսակ կենդանութիւն, շարժում ստանում: Ամէն կողմից խմբում են մսավաճառի շուրջը և հերթի չսպասելով՝ ահազին աղմուկ բարձրացնում: Թռչուններ, ինչպէս հաւ, բադ, հնդկահաւ, թէւ պահում են, և այն էլ բաւական մեծ քանակութեամբ, բայց հազիւ է պատահում,

որ մորթէին և ուտէին։ Մինչև մարդը չհիւանդանայ և կամ հաւը սատկելու ցինք, հաւով չսրպայ չի եփուիլ, Ձկներ ևս քիչ են գործածում, որովհետև գաւառում մեծ լճեր և գետեր ցինելով շատ չկան։

Գիւղացին մսով կշտանում է առաւելապէս մատաղ անելիս, ծանըր աշխատանքներից ազատուած նա բարձրանում է մի որևէ ուխտատեղի, և ազատ, թարմ օդում մորթում մի գառը կամ մի ոչխար և կամ գոնէ մի աքաղաղ, եփում, լորովում, կուշտ ուտում, մի քիչ էլ գինի լսմում և ապա կրկին հետի վերադառնում, մի գեղեցիկ գրօսանք կատարելով։ Երկար, ծանըր աշխատանքներից և վաս սննդառութիւնից յետոյ աչսպիսի մի գրօսանք և մանաւանդ աչսպիսի մի սննդարար սեղան, միացած յուսոյ և երախտագիտութեան հաւատոքի հետ՝ միանգամացն շատ լաւ ազդեցութիւն են անում գիւղացոյ թէ հոգեկան և թէ օրգանական կեանքի վրայ։

Բուսեղէններից ամենից աւելի և անհամեմատ մեծ քանակութեամբ գործ են ածում հացը, որ պատրաստում են ցորենից, գարուց, կարտոֆիլց և եղիպտացորենից։ Բանջարեղէնը այնքան շատ չի գործածում, որովհետև ընդհանրացած սովորութիւնն չէ դարձած բանջարանոցներ պահել։ Ընդհակառակը մրգեղէնը շատ մեծ քանակութեամբ է սպառուում։ Ըմառուաց սննդի մեծագոյն մասը՝ մրգեղէնն է կազմում։ Մի կտոր հաց դնելով թևկի տակ՝ կանաքը և տղաներ առաւու շատ վաղ գնում են ազգի և երեկոյեան վերադառնում։ Թութ, կեռաս, խնձոր, տանձ, և մանաւանդ լսաղող միւնոյն ցամաք հացի հետ զանազանակերպում են սրանց պարզուկ սեղանքը։

Կաթնեղէնից պանիրը ունեոր տներում անբաժան է հացից։ միշտ պանիր հացով սկսում, պանիր հացով վերջացնում են։ Մի ամբողջ կամ կէս լաւաշի մէջ պանիր շարելով՝ որորում են և մի ահազին բրդում շինելով՝ երկու ձեռքով բռնում և այտերը ուռեցրած՝ ուտելով գործերին գնում։ Ո՞չ պակաս գործածական է նաև մածունը, որ ոչ միայն կշացացնում, այլ և տապից հովացնում է, երբ շինուած են (ջրով խառնում) և վամում, կարագը, միացած մեղրի հետ՝ հիւրի կամ հարունեալուների բաժին է ընկնում։ Խսկ իւղը մեծ մասամբ վաճառ է հանուում և մեծ խնացութեամբ գործածում։

Մեղրը պաս օրերին գալիս է քաղցրացնելու սոխի ահազին կտորներով համեմուած լորու թողած համը։

Գիւղացիներն ընդհանրապէս շատակեր են, խսկ սրանց մէջ քահանաներն անկուշտ ժողովրդական առաջն ասում է, թէ մի գիւղացու ազգի երկու քահանայ և եօթը գոմէշ էին մտել և ուտում էին։ Երբ հարցրին գիւղացուն, թէ հրոնց դուրս հանեն այգուց, քահանաներին, թէ գոմէշներին։ Նա պատասխանեց. «Եթէ ուզում էք, որ

տունս չարի, հեռացրէք քահանաներին, որովհետև գոմէշները կը-կշտանան և կըդադարեն ուտելուց, իսկ քահանաները անվերջ պիտի ուտեն»:

Դիւղացիները օրական չորս անգամ են հաց ուտում. առաւօտեան, սովորաբար հաց ու պանիր կամ միայն ցամաք հաց. կէս օրին՝ մի, երբեմն և երկու տեսակ կերակուր, երեկոցեան մօտ, ժամը 4 ին՝ դարձեալ պանիր հաց, և երեկոցեան՝ ժամը 7-ին նոյն ճաշուաց կերակրները. Տղամարդիկ ճաշուամ են առանձին, կանաչք առանձին և մինչև որ տղամարդիկ ճաշից վեր չկենան, կանաչք չեն նստիլ հաց ուտելու. Սակայն այս միայն նահապետական տներում, մի սներում ամէն կերպ էլ պատահում է, կերակուրը մատուցանում են մի ամանի մէջ ածած և բոլորը սկսում են նրա միջից ուտել. Սակայն այժմ շատ տներ սկսել են իւրաքանչյուրին առանձին ամանով մատուցանել. Ճաշի ժամանակ շատ քիչ են խօսում, որովհետև ամէն մինը աշխատում է մի քանի պատառ միւսից աւելի ուտել. Երբ միս է լինում կերակրի մէջ, աւելի ճարպինները մինը միւսի լիտուից վերցնում են կտորները և միքանի տեղից կրծելուց լիտոյ վայր դնում իրենց առաջը, և երբ վերջանում է միաը, կրկին մէկ մէկ վերցնում են այդ միւնոցն կտորները և կարգին կռնում, հաստատ համոզուած լինելով որ այս անգամ մօտինը յի լիլի նրա պատառները, որովհետև ինքը արդէն մի անգամ կռնել է.

Հիւր եկած միջոցին չորս, հինգ, երբեմն էլ վեց տեսակ կերակրը ներ են պատրաստում և ամէն կերպ սոխպում են հիւրին, որ շատ ուտի:

**Պատառաքաղի** և անձեռոցիկի գործածութիւնը հետզհետէ մտնում է.

Խմիչքներից թէցը հետզհետէ ընդհանրանում է, Ունկոր տները արդէն առաւօտ երեկոյ խմում են թէց, միայն կծովի. Պաս օրերին միայն թույ են տալիս իրենց, այն էլ ոչ տան բոլոր անդամներին, քցած խմել՝ հացի հետ. Զքաւոր տներում թէցը պատրաստում է հիւր եկած միջոցին, մի շահաբ մէջ ջուր եռացնելով. Խոկ ունկոր տները ինքնաեւ ունենում են. Զքաւոր ընտանիքները թէցի փոխարէն գործ են ածում ուրիշ բոյսի տերևները, ոմանք էլ ուրիշ խոտեր:

Կաթ սովորաբար շատ չեն գործածում:

Ոգելից խմիչքներից սաստիկ գործածում է գինին, որ գաւառի արդիւնաբերութեան գլխաւոր բերքերից մինն է, և օղին Ո'չ մի ուրախութիւն, հարսանիք, կնունք, ոչ մի տխրութիւն, թաղում, յի անցնում առանց գինու և օղին. Սովորաբար առաջի բաժակը տանտէրն է խմում, երկար բարեմախտութիւններ անելով. Միւնոցն բա-

ժակը կամ բաժակները ձեռքից ձեռք անցնելով քսում են համարեա բոլորի շրթունքներին։ Եթե խմիչքը մատուցանում են, վերցնողը նախ թեթևութեամբ խփում է մատուցանողի ձեռին և «լաւ ձեռքէ է» ասելով վերցնում, երկար բարեմախութիւններ անում և խմում։ Ընմիջապէս՝ զանազան կողմերից «Ընուշ» են ասում և սա գլուխ տալով «Ընուշ կենաք» է պատասխանում։

Սովորաբար կերակուրները պատրաստում են իրենք, տանտիկինները, սկեսուրը կամ աւագ հարսը և խոհարար կամ խոհարարուհի չեն վարձում գիւղական ամենահարուստ տներումն անգամ։ Խոյնն է գրեթէ և քաղաքում ստորին և միջին դասակարգներում, Միայն շատ հարուստ տներում երևում են առանձին խոհարարներ կամ խոհարարուհիներ։

Հարսանիքի և թաղման ժամանակ տրուած ճաշերի համար կանչում են գիւղում ցայտնի կերակուր եփող կանաչք որոնք թուրքերէն բառով «Քէցվանի»—խոհարար են կոչում։ Հացն էլ իրենք տանտիկիններն են թխում, միայն վերոիշեալ միջոցներին կանչում են կամ բարեկամ և կամ աղքատ կանանց իրենց օգնելու։ Ըստ գիւղացիների ամենագործածական ուստելիքները։

### Բ ո ւ ս ե ղ է ն ն ե ր

Կարտոֆիլով հաց, կարտոֆիլը լուանում են և լցնում ջրով վկաթսացի մէջ եփում, ապա քաւկիրով հանում, դնում մի թէաքնի (փայտէ խոր սկոտսեղ) մէջ և «կարտոֆիլա թաքի» կոչուած փայտով,—որի մի ծաղը գունստ է, իսկ միւր երկար,—թակում, ապա վերցնում են և ածում մի ուրիշ կաթսացով եռացրած ջրի մէջ։ շերեփով խառնում, վլաւքամիով քամում և շերեփով այնքան ճմլում, որ կարտոֆիլի մասերն անցնում են վկաւքամու ծակերով, իսկ կեղեր մնում է փլաքամու վրայ, որը և դէն են ածում, իսկ կարտոֆիլի անցկացած մասի հետ այիւր են խառնում, շաղախում և հաց թխում։

Սիմիներով հաց։—Սիմինտը չորացնում են, խախայով մաղում, ջրալացում աղում, և ալիւրի հացի նման թխում ուշ-ուշ հաց, այսինքն կլոր հաստ հացեր, որովհետև շատ բարակ չի բացւում։

Պեաղաբն։—Կտրօնի խմորի պէս հունցելով խմորը, գնդում են, լլորաձև բաց անում, պատառաքաղով երեսը նախշում, երեսին ձու քսում, թոնրում թխում և ապա երեսին մեղր կամ շաքարաջուր քսու մ։ Քեաբա կամ պլիբ։—Ելիւրը հունցում են մի քիչ թթվամորով («Լու»)։ Հացի խմորից աւելի պինդ և թողնում մի քիչ թթուելու, ապա մի մեծ (մօտ  $\frac{1}{2}$ , արշ. տրամ.) գաւաթի մէջ պատրաստում են գեղ. (հաս, խուս).—իւղը առանց տաքացնելու ձգում են գաւաթի

մէջ և ձեռքով ի այնքան հարում, որ փրփրում է. այս ժամանակ մաղած ալիւր և ծեծած շաքար քիչ քիչ ցանելով շաղախում են, մինչեւ որ ստացւում է փիսրուն զանգուած: Սրանից յետոց՝ պատրաստուած խմորը դնդում են, գրտնակով բարակ բանում, սա կոչում է կոլոր լոշ:—ապա այս լոշի վրայ դնում են հետ, մի նոր լոշ դնում վերան, կրկին հետ փուռմ, կրկին լոշ փուռմ, և ապա մի անգամ էլ հետ փուռմ և լոշերը կորում, ճակելով: Յետոց երկու կամ երեք կտոր անում, իւրաքանչիւրի ծացրերը ոլորում, դնում խոնչի վրայ, տափակացնում, երեսը պատառաքաղով նախշում, ձռւ քսում և թխում: Թոնրից հանելիս երեսին մեղր կամ շաքարաջուր են քսում:

Տերով պլիթք:—Պատրաստում են պաս օրերին, ինչպէս ուտիսուաց բլիթը, հետը՝ ձէթով և շաքարով:

Կերոն:—Միքանի փունտ շաքար լուծելով եռացրած ջրի մէջ և շարմաղով քամելուց յետոց՝ լցնում են կաթի մէջ և սրանով շաղախում ալիւրը՝ միքանի տասնեակ ձռւ, թթվամոր, աղ, պղպեղ և աղվա \*) աւելացնելով: Երբ խմորը թթվում է, դնդում են և բանում եռանկիւնածեն, քառանկիւնի, քառակուսի և այլ ձևերով, ապա խմորի երեսին իւղ քսելով՝ փայտէ տիպով զանազան նախշեր են անում և ապա ձռւ քսում, խաշխաշ ցանում, պատառաքաղով ծակուտում դնում «տափ»-ի (հայտա) վրայ և խփում թոնրի կողին, թխում: Թոնրից հանելիս մեղր կամ շաքարաջուր են քսում երեսին:

Կուտապ:—Սանդի մէջ լցնելով ընկոյզ, ջարդած սոխ, քիշիչ, աղ և պղպեղ, թակում են, ձեռքով ճմլում, յետոց թանձր հունձած խմորը բաց անում, սրանից մի շերտ փառում, խմորի կէսը վրայ բերում, եղբերը ճխտում, թոնրի շուրթը խփում, եփում:

Ընում են առաւելապէս մեծ պասի երկուշաբթի, Եւադ ուրբաթ օրերը, գերեզմանաստուն տանելու:

Հալուայ:—Խւզը դաղում են, վերան մաղած ալիւր լցնում և խառնում, և երբ կարմրում է, մի քիչ էլ մեղր են աւելացնում և կրկին խառնում, մինչեւ որ պնդում է: Յետոց լցնում են փոքրիկ սկուտեղ-ների մէջ, երեսը հարթում, դղալի ծացրով կամ պատառաքաղով զանազան նշխներ անում, մի կտոր շաքար խրում մէջ տեղում և խայձեւ չամիչ շարում:

Ըռաւելապէս ծննդկաններին են նուէր տանում:

Խափիծ:—Ռւտեցնում են առաւելապէս ծննդկաններին: Մի քիչ ալիւր են մաղում վերան, սառը ջուր շաղ տալիս, մատներով տրորում, փոքրիկ, բրնձաչափ հատիկներ կազմում, ածում սոխուածի վրայ.

\*) Աղվան բաղկանում է գիւղ-դառչինից, դառչինից, կոճից և զիրափից:

խառնում, և երբ կարմրում է, մի գդալ էլ մեղր են ածում և մատուցանում:

**Ծնեբակ.**—Ծնեբակը ընտրում են, մաքրում, լուանում, խաշում, հանում ձգում իւղի մէջ և մի քանի հարած ձու լցնում վերան:

**Կարկաժ.** Դդումը, կարկաժ, դնում են կրակին, երբ քիչ խանձում է, կպչում են, ապա լուանում, կըտըրտում, կրկին լուանում, լցնում կաթսայի մէջ, մի քիչ ջուր ածում և եփում: Թթէ պասուայ է՝ մանրած ընկոզ, թթու հուն կամ դամբուկ աւելացնում, իսկ եթէ ուսիսուց՝ ջրի փոխարէն կաթ են ածում:

**Ջկուամածուն.**—Հասած զկեռը ածում են ջրի մէջ, եփ տայիս, մաղով քամում, կորինները և կեղլէ դէն ածում: Փուշի սնում—մի քիչ ալիւր ջրի մէջ խփում—ածում զկեռաջրի վրայ, աղ աւելացնում: Ուտելիս՝ ծեծած սխոր են աւելացնում իրենց բաժինների վրայ:

**Ջլաճաօ.**—Քուրը եռացնում են, բրինձը հ անգամ լուանում, ածում են ջրի մէջ, աղ ցկում (բրինձը ջրից 4 անգամ քիչ պիտի լինի): և թողնում եփ գալու: Մի ուրիշ կաթսայի մէջ ձէթ են ածում, սովորաբում, և երբ կարմրում է, ածում են բրնձի վրայ, մի քիչ խառնում, կաթսայի բերանը ծածկում և թողնում բոլորովին եփ գալու: Վերցնելիս ցկսմ են պղպեղ և կոտորած զինձ:

**Փրցի.**—Առաւելապէս ուտում եւ ծերունիները.

**Եռացրած** ջրի մէջ կոտորած սոխ և աղ են ածում, ալիւրը մաղում են մի սկսուտեղի վրայ, մի քիչ սառը ջուր շաղ տայիս, ապա մատներով ալիւրը շաղախում, բրնձի մեծութեան գնտակիներ պատրաստում, ածում առաջին կաթսայի մէջ և խառնում:

Ուտիսին իւղ են աւելացնում, պասին՝ ձէթ, մանրած ընկոյդ:

**Կոնցոլ.**—Խողով կամ ձէթով սոխուած են անում, մի քիչ ջուր աւելացնում, մի քիչ հաց բրդում, միքանի ձու էլ հարում, ածում կաթսայի մէջ:

**Պեննար.**—Ձեռներին շորեր կապած քաղում են պէնճարը, որ չկծուէ, յետոյ ընտրում են, մաքրում, դանակով կտրտում, խաշում, ջուրը քամում, աղ ցանում, իւղով կամ ձէթով տապակում: Ուտիսին ձու էլ են կոտորում վերան: Ոմանք էլ սխորը մաճնի մէջ խառնելով ածում են վերան:

**Աւելուկ.**—(միզուկ) հիւսում չորացնում են և պահում: Մրանից եփում են թթուաւ միզուկ, աղցան և ացն:

**Թթուաւ միզուկ.**—Աւելուկը լուանում և խաշում են, յետոյ քեաւկիրով հանում, դնում են խոնչի մէջ, աղ ցանում և ծհանով (թաթակիշ) ծեծում, մի քիչ թթու լաւաշ ձգում են աւելուկի ջրի մէջ, յետոյ այդ լաւաշը հանում, դնում են մի ամանի մէջ, ցուրտ ջուր ածում, տրորում, յետոյ ածում աւելուկի ջրի մէջ, ապա մի բուռ-

այիւր մի քիչ ջրի մէջ տրորում, ածում են նոյն աւելուկի ջրի մէջ, թակած աւելուկը լցնում այս կաթսայի մէջ, թողնում եփ գալու, վերջը մի քիչ էլ ծեծած ընկուզ լցնում:

Աւտելիս աւելացնում են ծեծած սխտոր:

Եխցան.—Ձեմով սոխուած են անում և խաշած ու ծհանով ծեծած աւելուկը լցնում վերան ապա տապակում. ուտելիս ծեծած սխտոր են աւելացնում:

Խաօֆի.—Ցորենը սաճու վրաց աղանձում են, փոխինդ դարձնում, յետոյ երկանքով աղում, ապա մաղում, մաղի մէջ մնացած խոշոր մասը ածում են ջրով լի կաթսայի մէջ, աղ ածում, եփում, երբ ջուրը քաշում է, մաղուած մանր փոխինձից մի քիչ էլ շաղ տալիս վերան, խառնում, վերցնում կրակից՝ Եթոյ թան կամ հարած չորաթան են ածում ամանի մէջ, խաշիլից ածում վերան, մէջ տեղում փոքրիկ փու անում և հալած իւղ ածում, ուտում:

Կորկոսի խաօֆի.—Կորկոտը սանդում թակում են, փռում արել տակ չորացնում, քամուն տալիս, որ թեփը գնաց, մաքրուի: Եպա երկանքում աղում, մաղում, լցնում ջրով լի կաթսան, եփում, երբ ջուրը քաշում է՝ աղ են ցանում և վերցնում են կրակից. Մի քիչ ալիւր մաղում և շաղ տալիս կաթսայի մէջ, նորից եփ տալիս, մինչև որ նա պնդում է: Նորից վերցնում, ածում ափսէները, մէջ տեղ փու անում, հալած իւղ ածում և ուտում:

Մոխտին.—Կորկոտը մաղում են, ածում ջրով լի կաթսան, քիչ եփ տալիս, թթխմբրը տաք ջրում ճամրուում, ածում կաթսայի մէջ խառնում, յետոյ լցնում են մի ամանի մէջ, 3—4 օր պահում, որ թթուի: Ապա քիչ քիչ ածում են կաթսայի մէջ, մի քիչ տաք ջուր աւելացնում, կրկին եփում, հայ բրդում, սխտոր խառնում և ուտում:

Կարտոֆիլաւ նաօ:—Կարտոֆիլը խաշում են, երբ հովանում է, կազում են, ճմրտում, ապա մի ուրիշ կաթսայի մէջ իւղ ածում, կոտորած տիլս աւելացնում, «ըրլլրհեռին» անում, յետոյ սառը կամ տաք ջուր ածում, և ճմրած կարտոֆիլը լցնում մէջը, աղ և պղպիղ ձգում, գինձ կտորում: Երբեմն էլ մի կամ միքանի ձու հարում, ածում են մէջը:

Եթէ պասուաչ է, իւղի փոխսարէն ձէթ են գործածում:

Ղուրդուդալի նաօ:—Սիմինդրը երկանքով խոշոր աղում են, տեփում, թեփը հանում (ածում են մի սկուտեղի մէջ, մի կողմից բռնած միւս կողմը վեր են շարժում, սիմինտը վեր է թռչում, այս միջոցին բարակ փշում են, թեփը թափում է դուրս, իսկ սիմինդրը՝ սկուտեղի մէջ) ապա մաղում են, մաղի մէջ մնացած խոշոր մասերը լցնում ջրով լի կաթսայի մէջ, եփում, յետոյ վերցնում են կրակից, մաղուած սիմինդրը լցնում մէջը և խառնում, ապա նորից կրակին դնում, աղ

ածում եփում, մինչև որ թանձրանում է: Եյս ժամանակ լցնում են ափակները, մէջ տեղերը փոս անում, հաղած իւղ լցնում և ուտում:

Լորի ճաւում:—Լորին նախ լուանում են, յետոյ ածում կաթսան, ջուր լցնում և դնում կրակին եփելու, երբ մի քիչ կակդում է, աղ են ցանում, երբ եփում է, քամում են, ձեռքով լորին ճմլում, վերան կտրտուած սոխ, ընկոզ և մի քիչ թթու լաւաշ ձգում, քամած ջուրը կրկին մէջն ածում, դնում կրակին կրկին եփում, վերջը պղպեղ և մի քիչ կտրտուած գինն ցանում և վերցնում:

Լորի-եաիմի:—Լորին եփելուց յետոյ քամում են, հատիկները վերցնում, վերան աղ, սոխ, պղպեղ ցանում, ուտում:

Լորու տոլմա:—Լորին երկանքով աղում են, լուանում, ջուրը քամում, ապա հում կարտովիլլ կպչում են, լուանում, մանր կտորում, և խառնում լորու հետ, աւելացնելով կոտորած սոխ, աղ, պղպեղ և գինն: Ապա կաղամբի տերևների մէջ փաթաթում, դարսում կաթսայի մէջ, մի քիչ ջուր ածում և եփում:

Խորանի:—Կանանչ լորին ծաղքերից կտրում են, յետոյ մանր կտորում, լցնում կաթսան, ջուր աւելացնում և դնում եփուելու Մի քիչ յետոյ ձգում են աղ, պղպեղ, կոտորած սոխ, նար վերցնում, փլաւ քամով քամում են, մի քիչ իւղ ածում կաթսայի մէջ, կոտորած սոխ լցնում, և երբ սոխը կարմրում է՝ լցնում են լորին և կաթսայի բերանը փակում: Ցետոյ միքանի ձու կոտրատում են մի ամանի մէջ, հարում, և ածում լորու երեսին, նորից կաթսան ծածկում և թողնում, որ լաւ եփուի: Ուտելիս մի քիչ թակած սխտոր ածում են մածունի մէջ, լաւ խառնում, և մի մի դդալ աւելացնելով լորու վրայ՝ ուտում:

Փլաւ:—Ջուրը եռացնում են, սրա  $\frac{1}{2}$ -ի չափ բրինձ լուանում, ածում են ջրի մէջ, դնում եփի, ապա աղ ցանում, երբ բրինձը հատ հատ որոշւում է, փլաւ-քամով քամում են, կաթսան լուանում, մի քիչ արդար իւղ ածում, կամ ձու հարում ածում կամ լաւաշ ձգում, ապա քամած բրինձը լցնում վերան, մի քիչ ցուրտ ջուր շաղ տալիս, պղպեղ ցանում և խուփը ծածկում, դնում մարմանդ: Կրակի վրայ: որ դամբ» դայ: յետոյ մի քիչ էլ հաղած իւղ շաղ տալիս վերան, ու տանում ուտում:

Զամիչը փլաւ:—Զամիչը մաքրում, խուզմի, արիւկի հետ միասին լցնում են հաղած իւղի մէջ, մի քիչ կարմրացնում և ածում են փլաւի վրայ: Ացսպիսի փլաւի մէջ ձու կամ լաւաշ դրած չեն լինում:

Թթուաւ փլաւ:—Հունը կրիկից ազատելով չորացնում են, իւղի մէջ կարմրացնում, լցնում փլաւի վրայ:

Հաւուի փլաւ:—Սոխ, չամիչ, բրինձ, հաւի կտորած քարճիլը իւղում տապակում են, մի քիչ աղ, պղպեղ ցանում, մաքրած հաւի

կուրծքը ճղում, լցնում են մէջը, կարում, ասեղով ծակչակոտում փորոտիքը, ջրով լի կաթսավի մէջ ձգում եփում, և յետոյ հանում, փլափի վրայ դնում:

Ոմանք էլ չամիչի փոխարէն - ե՞ր են ածում (չորացրած, անկորից հուն).

Քաշովի փլաւ— եւոյ հալում, կոտորած սոխ ածում, կարմրացնում, երեք չափ ցուրտ ջուր ածում, եռացնում, մի չափ բրինձ լցնում, աղ ցանում, մի քիչ խառնում, յետոյ վերցնում, դնում մի կողմ, որ դամը դայ:

#### Կ ա թ ն ե ղ է ն ն ե ր.

Թան.— Խնոցին հարելուց և կարագը վերցնելուց յետոյ թանը ածում են մի տոպրակ, բերանը պինդ կապում, դնում մի տաշտի մէջ մի քարի տակ քրային մասը հետզհետէ տոպրակից դուրս է թորում և մնում է պինդ մասը, այս ժամանակ միքանի ձու են կոտրում սրա վրայ, աղ ցանում, և փոքրիկ գնդեր արած դնում արևել տակ չորանալու. Ըստիս չորացած պահում են այս «չորաթանները» մինչև մի տարի:

Չորաթանով եփում են հըռածած, քիլինկէօշ, թանաւ.

Հրուածածը.— Եփելիս չորաթանը ձգում են մի գաւաթի մէջ, ջուր ածում, հարում և ջուրը լցնում մի կաթսավի մէջ, յետոյ կրկին ջուր աւելացնում, կրկին հարում, լցնում կաթսան, ապա դնում կրակին, մի քիչ կրոլուս կամ բրինձ աւելացնում, մի բուռ այլեւ էլ հարում, «փուշի» անում, ածում են, մի ձու էլ կոտրում, խառնում և թողնում եկ՝ գալու. Վերցնելիս կոտորած դաղ են աւելացնում.

Քիլինէօշ.— Չորաթանը ջրով հարում, ածում են կաթսան, դնում կրակին և շերենիով խառնում. երբ եփը գալիս է՝ կոտորած հաց են լցնում, մի քիչ եփելուց յետոյ վերցնում, ածում ամանները. թակած սխտոր, մի մի գրալ հալած իւղ աւելացնում, և ուտում:

Կարնաւ-նաօշ.— Մի չափ կաթ, երկու չափ ջուր խառնում, եփ են տալիս, մի չափ մաքրած էն երեք անգամ լուացած բրինձ ածում, մի քիչ էլ աղ ցանում և թողնում, որ եփ գայ:

#### Մ ս ե ղ է ն ն ե ր

Բուղլամի ենապայ. — Եւլուս միւսը կորտում, ածում են կաթսավի մէջ, կորտուած սոխ, աղ, պղպեխ ածում, կաթսավի բերանը ծածկում, դնում թոնկիրը կորկոտի կաթսավի վրայ. Սովորաբար եփում են կորկոտի հետ:

Խաւու. — Միսը կտորում են, լուանում և ածում ջրով լի մի կաթսայ,

եփում, քեափը քաշում, յետոյ միսը դուրս տալիս, ջուրը քամում, որպէս զի կեղտուա մասերը տակը մնայ, ապա ջրի երեսից խլը քաշում, լցնում կաթսան, կըտորած աղ աւելացնում, քիչ յետոյ մսերը ածում մէջը (շատ անգամ ոսկուներ էլ են ձգում, որ հիւթը դուրս տայ, յետոյ այս միջոցին դուրս ցկում), ջուրը նորից քամելով ածում մի վրայ, թողնում մի քիչ եփ գալու. ապա աղած բրինձ են ածում կաթսան և խառնում. Յետոյ առանձնապէս չորացրած դամբուկ կամ շլոր կամ թթուու լաւաշ ճմլում, եփում են և լցնում խաշի վրայ, որ փոքր ինչ թթուուշ լինի. Եթե եփում պրձնում է, միքանի ձու կոտրում են մի ամանի մէջ, գդալով հարում, լցնում խաշուի վրայ և անմիջապէս կրակից վերցնում.

**Մասա ժիղա.**—Միսը կտորում, ածում են ջրով լի կաթսայի մէջ և գնում կրակին եփում, քեափը քաշում, աղ ձգում, կրկին քեափը քաշում, կոտորած սոխ ածում, մաքրած և լուացած բրինձ աւելացնում և պղպեղ ցանում:

**Ոչխարի խած կամ եեալլա՛-փաշա.**—Ոչխարի ոտները, գլուխը խանձում, քերում, և մի քանի անգամ լուանում են. Նապա մաքրում են ստամոքսը (թափան), լուանում, կորատում և այս բոլորը լցնում են ջրով լի կաթսայի մէջ. երբեմն էլ միքանի կտոր դմակ աւելացնում և թողնում եփ գալու. Նապա աղ են աւելացնում Ուտելուց առաջ գլուխը կոտրատում են և ուղեղը առանձին մատուցանում:

**Տվարի խած.**—Տաւարի պճեները կրակի վրայ բռնած խանձում են, քերում, երեք անգամ տաք և մի անգամ ցուրտ ջրով լուանում, ապա կտորում, ձգում ջրով լի կաթսայի մէջ և գնում կրակին երկար եփում, աղ ցանում:

**Ուտելիս ծեծած միստոր են աւելացնում:**

**Խուխուպի.**—Եփում են սոփորաբար հաւի կամ ոչխարի մսով, Միսը կտրտում են, եթէ ոչխարի է՝ մի քիչ դմակ, եթէ հաւի՝ մի քիչ իւղ ցկում, խուփը ծածկում, թողնում են, որ մի քիչ կարմրի. յետոյ կոտրտած սոխ, աղ և պղպեղ են ածում, թողնում ասելի կարմրելու, ապա մի քիչ տաք ջուր աւելացնում և մաքրած նոան հատիկներ լցնում, Խուփը ծածկում են և թողնում եփուելու:

**Կուրկուս.**—Մի շերտ միս, մի շերտ կորկոտ են լցնում կաթսան, աղ ցանում, այսպէս շարունակում են, մինչև որ կաթսայի <sup>2/3</sup> մասը լցում է, ապա ջուր են ածում, կաթսայի բերանը ծածկում, լաւ վառուած թոնրի մէջ ջուր շաղ տալիս, որ կրակը անցնի, կսկարաչ դնում, ու կորկոտի կաթսան թոկերով կապած իջեցնում թոնրի մէջ, դնում կասկարի վրայ, Մրա վրայ դնում են երկրորդ կաթսան, ապա երրորդը, վերջինի վրայ մի քար են դնում, որպէս զի շոգուց կաթսայի խուփը չարձրանայ, Նապա տախտակներով ծածկում են թոնիրը

և ցեխով ծեփում, ալնպէս որ ոչ մի տեղից շոգին չի դուրս գալիս, ծածկում են նաև սնկուածքը (սիւնգու):

Եթէ կորկոտը քիչ է լինում, կաթսավի խփի շուրջը պատում են խմորով և գնում կրակի վրայ եփ տալիս:

Քիւրա. — Նոր մորթած տաք մսից կակուղ տեղը դնում են քիւթիւքարի վրայ, որ մի տափարակ, ողորկ քար է, և «քիւփթիթաքիւռով թակում»: Սա փայտէ մուրճ է, զլիսին մեխսեր խփած, որ լաւ թակի: Մի քիչ յետոյ աւելացնում են մի քիչ բրինձ, միքանի ձու, մի քիչ արդար խող, պղպեղ, աղ, գինձ և շարունակում թակել, մինչև որ միսր փրփրում է, Յետոյ մի կաթսայով ջուր են եռացնում, շերեփով մի քիչ տաք ջուր վերցնում, մի բուռ միս վերցնում, դնում շերեփի վրայ, կղորացնում և ձգում կաթսավ մէջ: Այսպէս բոլոր մսից կորուակներ են պատրաստում, թողնում եփ դայ, նրբեմն էլ մի ձուի գեղնոց են դնում կորուակի մէջ, որ հետը եփուի: Նրբ քիւթէն եփում է, հանում են և ջրի մէջ մի քիչ բրինձ ածում, աղ և պղպեղ աւելացնում, եփում և քիւթիւ հետ միասին ուտում:

Քիւրս. — Ովլասրի խւալի միսր ծեծում են սաթուրով, ինչպէս տոլ-մի համար, միքանի զլուս ծեծած սոխ, կինձ, ատվա, կորիզը հանած հուն, մի երկու ձուի գեղնուց աւելացնում, մնլում, իւղի մէջ բովում այնքան, որ միսր մերուի առանց կարմրելու նախ ջրով, առանց թըթ-խմորի, հունցած խմորը գնդում, բարակ բանում, մանր կտրտում, պատրաստում միար ածում վերան, խմորի ծայրերը վրայ բերում, եզրերը իրար կպցնում, ձգում եռացրած ջրի մէջ, եփում, հանում ջրից և կաթի կամ իւղ աւելացներով վերան՝ ուտում:

Բաօրդմա. — Միաը կտրաստում, սիս, աղ, պղպեղ լցնում, երբեմն էլ նուռ մնլում, ածում են պուտուկների մէջ, բերանները «սիրեկում»—անաստունների ստամոքսը մաքրում, աղում և չորացնում են, ապա դնում պուտուկների բերանին և պինդ կացում: Եթէ մտադիր են երկար պահելու, պուտուկը բերինքսի վայր են դնում: Ուտելիս խորովում, կամ եփում են: Ացավիսով միար թարմ է մնում:

Խախաչ. — Փափուկ մսերը բարակ և երկար ձևով մտավ կտրաստում են, և արևի տակ կախ տալիս, չորացնում, և ուտում:

Ամանք էլ այս իբր միս գործ են ածում զանազան կերակրների մէջ:

## Զ կ ն ե ղ է ն.

Զուկ. Զկան փորը մաքրում են, լուանում, եռացրած ջրի մէջ աղ լցնում, ապա ձուկը ձգում մէջը, եփում: Ուտելիս քացախ են լցնում մերան:

Զկաւ խաւու. Զուկը եփում են, ջրին իւղ, ձու, քացախ աւելացնում, ձուկը առանձին, չուրը առանձին ուստում:

Զկերի, ինչպէս և խորովածի հետ իբր գուգոիչ համեմունք գործ են ածում հետևեալ տեսակի շրթներում.

Նառ-շարաբ. — Թթու նոյի հատիկները կեղևից մաքրելով՝ լցնում են մի կաթսալի մէջ, բերանը ամուր ծածկում, դնում կրակին, եռ տալիս, ապա լցնում մի տոպարակի մէջ, քամում, և ծորած հիւթը կըրկին եռացնում, մինչև թանձրանալը:

Հման շարաբ. Պատրաստում են նոյն ձեռվ, միայն մի քիչ չուր են աւելացնում առաջին անգամ եփ տալիս,

Ղորաբբա. (Ժուռի՝ կիսահաս խաղողի շարաբ). — Կիսահասուն խաղողը ճմլում են, հիւթը եռացնում մինչև փոքր ինչ թանձրանալը՝ Գործ են ածում եփած և խորոված ձկնեղէնի հետ և ջրալի կերակրի մէջ, քացախի փոխարէն:

### ՀԻՒԾՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Գանձակի գաւառին առանձնալատուկ են ջերմը և իլեարասին (Bouton d'Alepere, գօծովուք). — Արիլֆեղալի \* ) առելով ջերմը դեռ ԽIII. դարում արտեղ սաստիկ տարածուած է եղել, և ինչպէս երևում է, հետզհետէ թուլանում է: Իլ-եարասու սպին կրում է գիրեթէ ամէն մի դանձակեցի և կան գերդաստաններ, որոնք չորս հինգ սերունդ յաջորդարար գրադաւել են այդ հիւանդութեան բժշկութեամբ:

Քաղաքում կան եօթը բժիշկ, բայց ոչ մի հիւանդանոց և կամ բուժարան: Ամբողջ գաւառում միմիայն Զեղամ և Գետաբէկի գիւղերում կան գիւղական բուժարաններ, առաջինը երկու, իսկ երկրորդը միայն մի բժշկով: Թէ որպիսի մեծ ծառալութիւն են մատուցանում այսպիսի բուժարանները՝ երեսում է նրանից, որ 1896 թուին՝ զիմել են Զեղամի բուժարանը 5340 հիւանդ, 1897-ին 4114, իսկ 1898-ին՝ 9250.

Գիւղացիները զրկուած լինելով բժշկի դիմելու հնարաւո-

\* ) D. de Montpréoux. Voyage autour du Caucase. IV. Եր. 112.